

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**

**FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA**

**ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ  
YOU HAVE A RIGHT TO KNOW**

տ ե ղ ե կ ա գ ի ր / b u l l e t i n N 3 5

[www.foi.am](http://www.foi.am)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ/CONTENT

Տեղեկատվության ազատության ոլորտը 2011թ.-ին .....	5
Հրապարակվել է ԻԱԿ-ի 10 ամյա գործունեության մասին գիրքը .....	6
<u>ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>	
Մեկնարկել են համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացները .....	7
ՏԱ ուսուցանողների վերապատրաստում .....	7
ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կայքը լավագույնն է .....	8
GiveMeInfo.am կայքը լավագույն քառյակում է .....	9
SOPA/PIPA-ն սպառնում են նաեւ Ինտերնետի հայկական տիրույթին .....	10
Իրավունքների պաշտպանության օրը՝ խնդիրների վրա սեւեռվելու օր .....	12
Տեղեկատվության ազատությունը Հայաստանի Հանրապետությունում Մոնիտորինգ 2011 .....	14
<u>ՏԱ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ</u>	
ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության դատը հետաձգվեց .....	16
Աշտարակ կաթն ու Մարիանան տեղեկատվությունը թաքցնելու պատճառ ունենին .....	17
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը մերժեց ՊՈԱԿ-ի բողոքը .....	18
ԻԱԿ-ը պահանջում է Չարթունքի գյուղապետարանի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչել .....	19
<u>ՀՈԴԿԱԾՆԵՐ</u>	
Արդյոք մատչելի՞ է «ԴատաԼեքսը» .....	20
Պաշտոնյաների նպատակը ոչ թե վնասի փոխհատուցումն է, այլ լրատվամիջոցը լռեցնելը .....	22
Նվեր լրագրողին. հայաստանյան մեդիաները տարբեր դիրքորոշումներ ունեն .....	25
<u>ՍԵՎ ՑՈՒՑԱԿ</u> .....	27
<b>ENGLISH VERSION</b>	
Freedom of Information in Armenia in 2011 .....	28
The launch of training courses for community servants .....	29
FOI Training of Trainers .....	30
Two Web Projects of the FOICA Received High Appraisal .....	30
Human Rights Expo-2011 .....	31
Freedom of Information in the Republic of Armenia: Monitoring 2011 .....	32
US Creating FOI Portal for All Agencies .....	34
Three Countries Join OGP; Disclosure Policy Criticized .....	34

Ծրագրի ղեկավար՝ Շուշան Դոյդոյան  
Project Director Shushan Doydoyan



«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

# Տեղեկատվության ազատության ոլորտը 2011թ.-ին

Հարցազրույց ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանի հետ

**- Եթե գնահատելու լինեք 10 բալանոց սանդղակով, 2011թվականին Հայաստանում տեղեկատվական ազատությանն ի՞նչ գնահատական կտաք:**

**Շ.Դ.** - 2011-ի ընթացքում տեղեկատվության ազատության ոլորտում բազմաթիվ նորարական նախաձեռնություններով է հանդես եկել Ինֆորմացիայի ազատության կենտրոնը: Մասնավորապես արդիականացվեցին ՀՀ բոլոր մարզպետարանների ինտերնետային կայքերը, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կայքը, մեկնարկեց [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) մոնիթորինգային վեբ նախագիծը: Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնում տարվա ընթացքում մեր մասնագետները վերապատրաստել են 340 քաղաքացիական և հանրային ծառայողների տեղեկատվության ազատության ոլորտում: Միևնույն ժամանակ ԻԱԿ-ը 4 նոր դատական հայց է ներկայացրել այն մարմինների դեմ, որոնք խախտել են մեր տեղեկատվություն ստանալու իրավունքը: Այնպես որ, դեռևս հսկայական անելիքներ կան ոլորտը զագացնելուն ուղղված: Դա կգնահատեի 7 բալ:

**- 2012-ն ընտրական տարի է: Ըստ Ձեզ՝ լրատվամիջոցներն ընդգծված քարոզչությամբ կամ հակաքարոզչությամբ կզբաղվե՞ն, և ընդհանրապես ՁԼՄ-ում ի՞նչ տեղ կունենա խոսքի ազատությունը:**

**Շ. Դ.** - 2012-ն իրոք փորձություններով լի տարի է լինելու լրատվամիջոցների համար: Այսօրվա լրատվական դաշտում, ցավոք, կա որոշակի գործիչների և կառույցների նկատմամբ հատուկ վերաբերմունք՝ դրական թե բացասական առումով, որը, կարծում եմ, առավել խորացված կզգացվի հատկապես նախընտրական շրջանում: Խոսքի ազատությունն առավել հաճախակի կենթարկվի բռնության, մասնավորապես մամուլի դեմ հարուցված դատական հայցերի թիվը կշատանա: Լրատվամիջոցներում առավել կուժեղանա ինքնագրաքննությունը:

**- Մեր երկրում ինտերնետ տիրույթը վերջին շրջանում բավական ընդլայնվել է: Ի՞նչ եք կարծում՝ էլեկտրոնային լրատվամիջոցներն ընտրական տարում որևէ բան կարո՞ղ են փոխել, և ընդհանրապես ի՞նչ ազդեցություն կարող են ունենալ:**

**Շ. Դ.** - Ընտրական տարում էլեկտրոնային լրատվամիջոցները նշանակալի դերակատարում են ունենալու: Դրանք առավել անկախ են իրենց հրապարակումներում, առավել անկաշկանդ, սակայն, միևնույն ժամանակ, խոսքի ազատության չարաչահումներն այստեղ առավել ակնհայտ են ու հաճախակի խոսքի անվերահսկելիության պատճառով: Հայիոյանքը, զրպարտությունը հեղեղելու են էլեկտրոնային մամուլը: Բայց և էլեկտրոնային մամուլը դաշտ է ապահովելու ազատ և անկաշկանդ քաղաքական այլընտրանքային խոսքի համար:

**- Ի՞նչ միտում է նկատվում՝ Հայաստանում տեղեկատվական ազատությունը տարեցտարի առաջընթաց, թե՞ հետընթաց է ապրում:**

**Շ. Դ.** - Անշուշտ, տեղեկատվության ազատությունն առաջընթաց է ապրում, կառավարման համակարգը տարեցտարի ավելի ու ավելի թափանցիկ և հրապարակային է դառնում, ներդրվել է էլեկտրոնային կառավարման համակարգը: Սակայն այս տարի մեր կողմից իրականացված լայնածավալ մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ տեղեկություն ստանալու հարցումների 30 տոկոսը մնում է անպատասխան: Սա խիստ մտահոգիչ ցուցանիշ է: Ինչ խոսք, մեղավորներն արժանանում են ամենախիստ հանրային քննադատության, հայտնվում են դատարանում մեր հարուցած գործերի արդյունքում և տեղեկատվությունը տրամադրում են դատարանում:

*Հարցազրույցը վարեց Արեգնազ Մանուկյանը  
Աղբյուրը՝ 7or.am*

# Հրապարակվել է ԻԱԿ-ի 10 ամյա գործունեության մասին գիրքը

Հրապարակված գրքում ներկայացված է ԻԱԿ-ի 10ամյա գործունեությունը, ձեռք բերումները:

## Մենք հպարտ ենք մեր 10-ամյա ձեռքբերումներով»



Երբ 2001թ.-ին հիմնադրվում էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, տեղեկատվության ազատության գաղափարը դեռևս անհայտ էր մեր հասարակությանը, սակայն հսկայական էր դրա անհրաժեշտությունը: Միեւնույն ժամանակ, Կենտրոնի հիմնադիրները վստահ էին, որ երկրում շատ խնդիրներ հնարավոր կլինի հաղթահարել՝ ապահովելով կառավարման համակարգի մատչելիությունը, տեղեկատվության ազատությունն ու թափանցիկությունը: Կենտրոնը հիմնադրվեց 2001թ. հունիսի 1-ին:

Մեր 10 ամյա գործունեության պատմությունը նշանավորվում է նշանակալի ձեռքբերումներով.

1. Տեղեկատվության ազատության մասին առաջավոր օրենքի մշակում և ընդունում 2003թ.-ին, որը եղավ մեր առաջին հիմնական ու կարևոր քայլը տեղեկատվության ազատության ապահովման ճանապարհին:
2. Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնի հիմնում և 2500 քաղաքացիական և հանրային ծառայողների վերապատրաստում տեղեկատվության ազատության

օրենսդրության կիրառման վերաբերյալ, քաղաքացիական հասարակության 3750 անդամների ուսուցում տեղեկատվության ազատության իրավունքի օգտագործման վերաբերյալ:

3. Հանրային լայն քարոզարշավ հեռուստատեսությամբ, ռադիոյով, մամուլով, ինտերնետով, տեղեկատվության ազատության «Ոսկե բանալի և Ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպում:
4. Խորհրդատվություն հազարավոր քաղաքացիներին, լրագրողներին ու պաշտոնյաներին տեղեկատվության ազատության պատշաճ կիրառման վերաբերյալ:
5. Տասնյակ գրքերի, 2 դատական ժողովածուի և ուսումնական ձեռնարկների հրապարակում բոլոր թիրախ խմբերի համար:
6. «Դու տեղյակ ես» հեռուստահաղորդաշարի ստեղծում և տասնյակ հաղորդումների հեռարձակում:
7. Տասնյակ դատական գործեր ընդդեմ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաների:
8. Արդիականացված պաշտոնական ինտերնետային կայքեր, էլեկտրոնային կառավարման մեխանիզմների հիմնում և արդիականացում:
9. Ակտիվ միջազգային համագործակցություն և Տեղեկատվության ազատության պաշտպանների միջազգային ցանցի հիմնադրում:
10. ԵՎ վերջապես, ԻԱԿ-ին հաջողվեց բացության և հրապարակայնության միջավայր ձևավորել, տեղեկատվության ազատության գաղափարը Հայաստանում դարձնել հանրաճանաչ:

Շուշան Դոյոյան  
ԻԱԿ նախագահ

## Մեկնարկել են համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացները

Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնում 2011թ. հոկտեմբերից վերսկսել են վերապատրաստման դասընթացները, որին մասնակցում են Կոտայքի, Արագածոտնի և Արարատի մարզերի տարբեր համայնքների համայնքային ծառայողներ:

**Տ**եղեկատվության ազատության կրթական կենտրոնում 2011թ. հոկտեմբերից վերսկսել են վերապատրաստման դասընթացները, որին մասնակցում են Կոտայքի, Արագածոտնի և Արարատի մարզերի տարբեր համայնքների համայնքային ծառայողներ: Դասընթացներն իրականացվում են ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 129-Ա հրամանով հաստատված «Միջանձնային հարաբերությունները, տեղեկատվության ազատությունը և հասարակայնության հետ կապերի ապահովումը տեղական ինքնակառավարման համակարգում» վերապատրաստման ծրագրով: Յուրաքանչյուր դասընթաց տևում է 3 օր: Դասընթացն ավարտելուց հետո մասնակիցներին

շնորհվում են պետական վկայականներ՝ վավերացված ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ԻԱԿ-ի և Հայ պետական ծառայողների միության կողմից:

Նշենք, որ Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնը հիմնադրվել է 2010 թվականի նոյեմբերի 22-ին՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակներում: 2010-2011թթ. կրթական կենտրոնում վերապատրաստվել են 301 քաղաքացիական ծառայող:

## ՏԱ ուսուցանողների վերապատրաստում

Նոյեմբերի 25-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ մեկնարկեց «Տեղեկատվության ազատության ուսուցանողների վերապատրաստման երկօրյա դասընթացը»:

**Դ**ասընթացին մասնակցում են Հայաստանում գործող ՀԿ, ՁԼՄ ներկայացուցիչներ, ովքեր տեղեկատվության ազատության ոլորտում բավականին փորձ և գիտելիքներ ունեն և հետագայում կստանան ՏԱ ուսուցանողների դերը:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանն իր ողջույնի խոսքում կարևորեց նման դասընթացի կարևորությունը՝ շեշտելով, որ այսօր արդեն մեծ պահանջ կա ՏԱ ոլորտի ուսուցանողների, ովքեր իրենց նախաձեռնությամբ կամ ԻԱԿ-ի հետագա ուսուցումներին կներկայացնեն Տեղեկատվության ազատության ոլորտը, հիմնական սկզբունքները, օրենսդրական կարգավորումը և կիրառումը ներկայացնել պաշտոնյաներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, կկիսվեն իրենց փորձով և այլն:

Երկօրյա դասընթացը բաժանված է երկու հիմնական մասից. ԻԱԿ փորձագետ Լիանա Դոյդոյանը մասնակիցներին ներկայացրեց վերապատրաստման գործընթացում վերապատրաստողի դերի և հմտությունների սկզբունքները, բանավոր խոսքի և ներկայացման արվեստը:

Երկրորդ բաժինը ներկայացրեց ԻԱԿ իրավաբան Գևորգ Հայրապետյանը, ով մասնակիցների հետ քննարկեց ՏԱ ոլորտում առկա հիմնախնդիրները, օրենսդրական կարգավորումը և անհրաժեշտ բարեփոխումները:

## ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կայքը լավագույնն է

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ և աջակցությամբ, Հելիքս ընկերության կողմից պատրաստված ՀՀ տարածքային կառավարման նախարարության կայքը ճանաչվել է լավագույնը:

**Խ**ոսքի ազատության պաշտպանության կոմիտեն (ԽԱՊԿ) հրապարակել է հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը ՀՀ պետական մարմինների կայքերի տեղեկատվական թափանցիկության մոնիտորինգի արդյունքները:

ԽԱՊԿ նախագահ Աշոտ Մելիքյանն ցել է, որ՝ «Դիտարկումն իրականացվել է 177 չափորոշիչով, որոնցից 150-ը բովանդակային, իսկ 27-ը՝ տեխնիկական: Չափորոշիչները ներառում են գերատեսչության հասցեի, ֆաքսի, հեռախոսահամարի վերաբերյալ տեղեկությունների առկայությունից մինչև աշխատանքի թափուր տեղերի և բյուջեի մասին տվյալները»,-ասել է Աշոտ Մելիքյանը:

Նրա խոսքերով, մոնիտորինգի առաջին փուլից հետո (ս.թ.փետրվարի 1-ապրիլի 30) ԽԱՊԿ-ը կայքերի պատասխանատուների հետ ունեցել է հանդիպումներ և տեղեկացրել «խաղի կանոններին»:

«Երկրորդ փուլում նախարարությունների և կառավարությանն առընթեր մարմինների կայքերում բարելավումներն ակնհայտ էին: Դիտարկվող չափանիշներին առավելապես համապատասխանում են տարածքային կառավարման(www.mta.gov.am՝ 52.07%), տրանսպորտի և կապի (www.mtc.am՝ 51.09-6%), աշխատանքի և սոցիալական հարցերի (www.mss.am՝ 48.39) նախարարությունների կայքերը, իսկ վերջին հորիզոնականում է մշակույթի նախարարության կայքը (www.mincult.am՝ 19.62%)»,-ասել է նա:

Աշոտ Մելիքյանն ասել է, որ որոշ չափով բարելավվել են մարզպետարանների կայքերի ցուցանիշները և վատթարացել է ՀՀ նախագահի, ԱԺ-ի, կառավարության, դատախազության և Սահմանադրական դատարանի կայքերի թափանցիկությունը:

ԽԱՊԿ նախագահը միաժամանակ ցել է, որ դիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ կայքերի մեծամասնությունում տեղադրված չէ անհրաժեշտ ինֆորմացիա բյուջեի ծավալի և կատարման, թափուր պաշտոնների և աշխատանքի ընդունման համար մրցույթների վերաբերյալ:

Պետական մարմինների կայքերի վարկանշային աղյուսակներին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ [www.khosq.am](http://www.khosq.am) կայքում:

Աղբյուրը՝ [mediamax.am](http://mediamax.am)

**ԻԱԿ** - Հավելենք, որ ՀՀ ՏԿՆ և տասը մարզպետարանների կայքերը մշակվել և գործարկվել են «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության մատչելիությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակներում, ԱՄՆ ՄԶԳ ֆինանսական աջակցությամբ:



## GiveMeInfo.am կայքը լավագույն քառյակում է

2011թ.-ի դեկտեմբերի 3-ին տեղի ունեցավ ArmnetAward համահայկական վեբ մրցանակաբաշխությունը: Մրցույթի մասնակցած շուրջ 600 հայկական կայքերի մեջ ԻԱԿ-ի նախաձեռնությամբ ստեղծված [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) կայքը ընդգրկվել է «Տարվա նորարարություն» անվանակարգի լավագույն քառյակում:

Համահայկական ինտերնետային մրցույթը և «ArmNet 2011» միջոցառումների շարքը կազմակերպվում և իրականացվում են SP Marketing Solutions, Orange Արմենիա ընկերությունների և Հայաստանի Ինտերնետ Հանրություն ՉԿ կողմից: Armnet 2011-ը կոչված է գնահատել տեխնոլոգիաների հանրայնացման հետ մեկտեղ՝ ինտերնետի հայկական սեզմենտում կատարված առաջընթացը, խրախուսել հայկական կայքերի բովանդակային զարգացումը և նպաստել նոր ընկերությունների ստեղծմանը:

Նախագծի միջոցառումներից առաջինը՝ Armnet Awards 2011 հայկական ինտերնետ-կայքերի մրցույթն է, որի նպատակն է բացահայտել և պարգևատրել լավագույն հայկական ինտերնետային կայքերը:

[GiveMeInfo.am](http://www.givemeinfo.am) վեբ նախագիծը «Տարվա նորարարություն» անվանակարգի լավագույն քառյակում մրցակցում էր [www.publicdata.am](http://www.publicdata.am), [www.parliamentmonitoring.am](http://www.parliamentmonitoring.am), [www.annoisys.org](http://www.annoisys.org) կայքերի հետ: Մրցույթում ընդգրկված շուրջ 600 կայքերից ըտրվեցին 8 լավագույն կայքերը հետևյալ անվանակարգերում:

- Դիզայն և հարմարավետություն [www.armenianmonuments.org](http://www.armenianmonuments.org)
- Նորարարություն- [www.annoisys.org](http://www.annoisys.org)
- Տեխնիկական կատարում [www.yerevanguide.am](http://www.yerevanguide.am)
- Բովանդակություն- [www.genocide-museum.am](http://www.genocide-museum.am)
- Տարվա առաջընթաց [www.parliamentmonitoring.am](http://www.parliamentmonitoring.am)
- Գլխավոր մրցանակ (բոլոր անվանակարգերում ժյուրիի կողմից առավելագույն թվով ձայների ստացած կայքը) [www.parliamentmonitoring.am](http://www.parliamentmonitoring.am)

- Ժողովրդական ընտրություն (ըստ հանրային քվեարկության) [www.newsinfo.am](http://www.newsinfo.am)
- Orange-ի կողմից սահմանված մրցանակ՝ լավագույն մոբայլ կայքի համար [m.lragir.am](http://m.lragir.am)
- Հատուկ մրցանակին արժանացան [www.granish.org](http://www.granish.org), [www.publicdata.am](http://www.publicdata.am) կայքերը:

«Վստահ ենք, որ կկարողանանք վերստեղծել այն հետաքրքիր ու դինամիկ մթնոլորտը, որ կար ArmNet 2010-ի ժամանակ, և այս տարի նույնպես մրցույթը թույլ կտա բացահայտել և ճանաչել հայ մասնագետների կողմից ստեղծված նոր և որակյալ կայքեր, որոնք անհայտ կմնային հանրությանը առանց ArmNet-ի, ճիշտ այնպես, ինչպես օրինակ Փարաջանովի թանգարանի կայքն անցյալ տարի»-նշեց SP Marketing Solutions ընկերության տնօրեն Հայկուհի Տաքսիլարյանը այսօր կայացած մամլո ասուլիսի ժամանակ:

«Մենք ուրախությամբ ենք միանում այս նախագծին, որը մեր կազմակերպության համար յուրօրինակ փորձ է լինելու: 1997թ. ի վեր Հայաստանի Ինտերնետ Հանրություն ՉԿ-ն կառավարում է ինտերնետի Հայաստանյան դոմենը և իրականացնում տարբեր ծրագրեր ոլորտը զարգացնելու համար: Մեզ համար այսօր մեծ հետաքրքրություն է մասնակցել և աջակցել վեբ կայքերից լավագույնների գնահատմանը: Այսպիսի նախագծերը կարևորագույն դեր են խաղում Հայաստանի ՏՏ ոլորտի զարգացման և առաջխաղացման գործում», - ասաց Ինտերնետ Հանրություն ՉԿ-ի նախագահ Իգոր Սկրտունյանը:

Աղբյուրը՝ [www.armnetawards.am](http://www.armnetawards.am)

# SOPA/PIPA-ն սպառնում են նաև Ինտերնետի հայկական տիրույթին

Հունվարի 18-ին նա սովորականի պես չկարողացավ մտնել Wikipedia. կայքն անհասանելի էր, ամբողջությամբ «սևացած» ֆոնին գրված էր՝ «Պատկերացրեք աշխարհն առանց ազատ գիտելիքի»:



12-րդ դասարանցի Սարիան Ավագյանը օրական նվազագույնը երկու ժամ անցկացնում է ինտերնետում ու գրեթե ամեն օր օգտվում է Wikipedia-ից՝ դասերը պատրաստելու կամ պարզապես հետաքրքիր հոդվածներ ընթերցելու համար:

Այս օրը «սևացած» էին 75.000 կայքեր, այդ թվում նաև Google-ը, Mozilla-ն, Wordpress-ը, որոնցից շատերի վրա երևում էր «Գրաքննված է գրությունը»: Կայքերն այդպես պայքարում են Ինտերնետում հնարավոր գրաքննության դեմ, որը նախատեսում են Կոնգրեսում քննարկվող SOPA (Stop Online Piracy Act) և Սենատում քննարկվող PIPA (PROTECT IP Act) օրինագծերը:

«Դադարեցրեք Օնլայն ծովահենությունը» (SOPA) և «Տնտեսական ստեղծագործականության իրական օնլայն սպառնալիքների և մտավոր սեփականության գողության կանխարգելում» (PIPA) օրինագծերի նպատակն է կառավարությանն ու հեղինակային իրավունքի սեփականատերերին հավելյալ գործիքներ/լծակներ տրամադրել արգելափակելու այն խարդախ կայքերը (հատկապես՝ ԱՄՆ-ի տարածքից դուրս գրանցված), որոնք կեղծծված ապրանքներ են առաջարկում և խախտում են հեղինակային իրավունքները:

Օրինագծերի համաձայն՝ ինտերնետային գործունեության ցանկացած մասնակից՝ սկսած փրովայդերներից, որոնողական համակարգերից, վերջացած գովազդատուներով, պարտավոր է իրավապահների ցանկացած դիմումի դեպքում դադարեցնել ծառայություններ մատուցել այն ռեսուրսին, որը մեղադրվում է ծովահենության մեջ՝ դադարեցնելով նրա հետ ցանկացած համագործակցություն (պարտավորվելով արգելափակել կայքը, արգելափակել վճարային համակարգերի գործողությունը՝ (Paypal, Visa, և այլն) հեռացնել կայքը որոնողական համակարգից, հեռացնել ակտիվ հղումները դեպի այդ կայքեր և այլն) հակառակ դեպքում այն կհամարվի մեղադրվող կայքի հանցակից: Իսկ որպես հանցագործության մաքսիմալ պատժաչափ նախատեսված է ազատագրվում մինչև 5 տարի ժամկետով:

Օրինագծերի դեմ պայքարողները գտնում են, որ դրանք խախտում են ԱՄՆ-ի Սահմանադրության առաջին փոփոխությունը, գրաքննություն են մտցնում Ինտերնետում, սահմանափակում են խոսքի ազատությունը և Ինտերնետի զարգացման հնարավորությունները:

Հունվարի 18-ին կայքերը սևացելուց ակցիան աննախադեպ օնլայն ակտիվիզմ արձանագրեց ԱՄՆ-ում. 4.5 միլիոն մարդ մասնակցեց Գուգլի anti-SOPA ստորագրահավաքին, ևս 1.5 միլիոն նման այլ ստորագրահավաքների, 162 միլիոն մարդ տեսավ Վիքիփեդիայի սևացած էջը, SOPA/PIPA-ի հետ կապված 2.4 միլիոն թվիթ գրվեց միկրոբլոգում, կայքերի բողոքի արդյունքում 35.000 մարդ նամակ գրեց սենատորներին և ներկայացուցիչներին:

SOPA/PIPA-ի ճակատագիրը կարևոր է ոչ միայն ԱՄՆ-ի ժողովրդի և կայքերի, այլև ինտերնետից օգտվող յուրաքանչյուր օգտատերի համար: Ինտերնետում գրաքննություն մտցնող օրինագծերը իրենց ուղղակի ազդեցությունը կունենան նաև Հայաստանի վրա: Տեղեկատվական տեխնոլոգի-

աների հայ մասնագետները մտահոգված են դրանց ընդունման հնարավոր հետևանքներով:

«Ինտերնետը մի տիրույթ է, որտեղ ոչ միայն պատրաստվում, այլև տարածվում են ինֆորմացիան և քոփիրայթի բոլոր օբյեկտները: Եվ եթե SOPA-ն անցնի, նշանակում է, որ բոլոր տարածող կայքերը վտանգի տակ են և կարող են փակվել յուրաքանչ-յուր պահին»,- ասում է SS մասնագետ Միքայել Ղազարյանը:

Նրա խոսքերով՝ վտանգի տակ գտնվող կայքերի թվում են նաև հայկականները:

«Ինտերնետը տվյալ պարագայում չունի սահման, ու դա անմիջապես կազդի նաև Հայաստանի վրա, որովհետև եթե նույնիսկ Հայաստանը դուրս է ԱՄՆ-ի օրենքի ազդեցության տակից, հայկական կայքերը, որոնք ամերիկյան օրենքների խախտում կհամարվեն, կհեռացվեն Գուգլի որոնողական համակարգի արդյունքներից, և հայ օգտատերը չի կարողանա գտնել հայկական կայքերը, քանի որ օգտվում է ամերիկյան որոնողական համակարգերից»,- ասում է նա:

Տեղեկատվական Տեխնոլոգիաների ինժեներ Նորայր Չիլինգարյանը գտնում է, որ հեղինակային իրավունքն արդեն կորցրել է իր արդիականությունը, և թվային դարաշրջանում դրա սահմանափակումները պետք է վերանայվեն:

«Հեղինակային իրավունքի մասին օրենքները ստեղծվել են մինչև թվային դարաշրջանը, երբ գիրքը, նկարները, և հեղինակային իրավունքի այլ առարկաներն այդքան հեշտ չէր կրկնօրինակելը, և հստակ կարելի էր գծել սահմաններ կրկնօրինակման, պարզապես դիտելու ու տարածելու մեջ: Թվային աշխարհում այդ սահմանները գծելը այդքան էլ հեշտ չէ, և բնական է, որ այդ ակտի պրոեկտը չէր լինի, եթե փաստացի անհամապատասխանություն չստեղծվեր քոփիրայթի գաղափարի ու ժամանակա-

կից թվային աշխարհի մեջ»,- ասում է նա:

SS ինժեների խոսքերով՝ եթե չլինեին հեղինակային իրավունքի մասին օրենքներում հատուկ փոփոխությունները, ամեն անգամ, երբ համացանցային զննիչը ցույց տար որևէ բովանդակություն՝ տեքստ, լուսանկարներ և այլն, դա կլիներ օրենքի խախտում, քանի որ ցույց տալու համար այն համակարգչի հիշողության մեջ կրկնօրինակ է ստեղծում:

«Այսինքն՝ քոփիրայթն արդեն իսկ մեղմացվել է, որովհետև հակառակ դեպքում վերը գոյություն չէր ունենա»,- ասում է նա:

Նորայր Չիլինգարյանի կարծիքով՝ SOPA/PIPA-ն ինտերնետի բովանդակությանը սպառնացող օրինագծեր են, որովհետև դրանց ընդունման արդյունքում բազմաթիվ ինտերնետային ռեսուրսներ կփակվեն, և օգտակար քոնթենթի քանակը կտրուկ կպակասի:

Հ.Գ. Հունվարի 18-ին SOPA-ի դեմ բողոքին միացավ նաև հայկական Badu.am կայքը՝ իր օգտատերերին ուղղելով հետևյալ հաղորդագրությունը՝ «Այսօր աշխարհի հազարավոր կայքեր միացել են համացանցի ազատությունը վտանգող օրինագծի դեմ: «Բադու»-ի ժողովուրդն էլ է միանում բողոքի ակցիային: Այսօր ԱՄՆ-ում, վաղը ամենուր նստելու են մեր գլխին, տրնգի պարեն»:

**Աղբյուրը՝ [media.am](http://media.am)**

# Իրավունքների պաշտպանության օրը՝ խնդիրների վրա սևեռվելու օր

Դեկտեմբերի 10-ին մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրը Երևանում կազմակերպված «Մարդու իրավունքների EXPO»-ում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ներկայացրեց «Տեղեկատվության ազատության իրավունք» տաղավարը:



«Հայաստանի անկախությունից ի վեր, ու նաև այս տարվա, մարդու իրավունքների պաշտպանության ամենասուր և ամենահամակարգային խնդիրը արդար դատաքննության պակասն է», - «Մարդու իրավունքների EXPO»-ի ժամանակ հայտարարեց Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը: Նա կոչ արեց բոլոր քաղաքական ուժերին առաջիկա ընտրությունների շրջանում ծավալվող հանրային քննարկումներում ոչ միայն ներկայացնել դատական իշխանության ներկայիս վիճակը, որը հայտնի է բոլորին, այլ ընտրողներին մատուցել արդար դատարան ունենալու գործուն և իրատեսական ծրագրեր:

Տարին ամփոփելով՝ նա տեղեկացրեց, որ ՄԻՊ գրասենյակին ուղղված բողոքներն ամենից շատը վերաբերել են անձանց ընտանեկան նպաստի իրավունքից զրկելուն և կենսաթոշակները սխալ հաշվարկելուն: Պաշտպանին ուղղված բողոքներով ամենից շատ դրական լուծումները ստացվել են Պաշտպանության նախարարությունից, իսկ օմբուդսմենի գրասենյակի կողմից արված օրենսդրական առաջարկություններն ամենից շատ ընդունել են Առողջապահության և Աշխատանքի ու սո-

ցիալական հարցերի նախարարությունները:

«Մարդու իրավունքների EXPO»-ի ժամանակ ներկայացված 10 տաղավարները վերաբերում էին իրավունքների ամենատարբեր ոլորտներին:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոնը»-ն ներկայացնում էր «Տեղեկատվություն ստանալու իրավունք» տաղավարը: Կարևոր է, որ սրահում մեր տաղավարն առաջինն է, որովհետև մարդու մյուս բոլոր իրավունքները խարսխվում են այս իրավունքի վրա: Եթե մարդը չի ունենում ժամանակին ամբողջական տեղեկատվություն, ապա մյուս բոլոր իրավունքներից չի կարող լիարժեք օգտվել», - նշեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» ՀԿ նախագահ Շուշան Դոյոյանը:

«2011 թվականի ընթացքում չեն կարծում, թե հաշմանդամություն ունեցող անձինք լուրջ փոփոխություններ զգացին իրենց կյանքում», - ասում է «Ունիսոն» ՀԿ գործադիր տնօրեն Արմեն Ալավերդյանը: «Ունեցել ենք խոստում, որ շուտով ավտոբուսների մի մասը կլինի հարմարեցված հաշմանդամների համար: Առայժմ՝ խոստման ձևով, բայց հուսով ենք, որ աշխատելով քաղաքապետարանի հետ կհասնենք ինչ-որ բանի», - հույս է հայտնում Ալավերդյանը: Ջբաղվածության ոլորտում թեև հայտնվել են գործատուներ, ովքեր պատրաստ են աշխատանքի վերցնել հաշմանդամ մարդկանց, սակայն «Ունիսոնի»-ն գործադիր տնօրենի խոսքերով՝ դա ավելի շատ անհատական նախաձեռնություն է և համակարգային բնույթ չի կրում:

Հայաստանում ապրող 11 ազգային փոքրամասնությունները ներկայացել էին մեկ տաղավարում:

«Ես միշտ ասել եմ և ասում եմ, որ ազգային փոքրամասնությունների իրավունքներն իրավական մակարդակում պաշտպանված են, բայց այդ իրավունքների իրացման համար ոչ միայն պետք է օրենքով սահմանել, այլև այդ իրավունքների իրագործման համար հնարավորություններ ստեղծել՝



հավասար հնարավորություններ և պայմաններ», - նշեց «Միդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ Ամո Շարոյանը՝ հավելելով, որ եթե իրավունքները թղթի վրա են մնում, ուրեմն չեն պաշտպանվում:

Շարոյանի խոսքերով՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները իրենց կամքի արտահայտումը չեն տեսնում ոչ խորհրդարանում, ոչ կառավարությունում, որովհետև այդ մարմիններում չունեն իրենց՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչը:

Խոշտանգումների կանխարգելման ոլորտում կարևոր ձեռքբերումները քրեակատարողական հիմնարկների և ոստիկանության ձեռքակալվածներին պահելու վայրերի հասարակական դիտորդների խմբերն են, որոնք ինչ-որ չափով կանխարգելիչ բնույթ ունեն՝ կարծում է «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ նախագահ Արման Դանիելյանը:

Նրա խոսքերով՝ շարունակում է խնդրահարույց մնալ ՀՀ քրեական օրենսգրքում «խոշտանգում» եզրույթի սահմանումը, որը չի համապատասխանում ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիայի եզրույթին: «Այդ առումով՝ դժվար է նույնիսկ գնահատել, թե քանի մարդ է դատապարտվում Հայաստանում բուն խոշտանգումների համար», - ասում է Դանիելյանը:

Նրա կարծիքով՝ պետության կողմից ցանկություն չկա պայքարելու խաշտանգումների դեմ, նույնիսկ ակնհայտ խոշտանգման դեպքերին համապատասխան արձագանք չի տրվում: Իրավապաշտպանը հույս ունի, որ խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմը որոշ չափով կլուծի առկա խնդիրները:


Մարդու իրավունքների առաջին պաշտպան, Աժ պատգամավոր Լարիսա Ալավերդյանը «Մարդու իրավունքների EXPO»-ն դրական է համարում նրանով, որ հասարակական կազմակերպությունները հնավարություն ունեն ցույց տալ, թե ինչով են զբաղվում և ինչ խնդիրներով կարող են մարդիկ դիմել իրենց, եթե նրանց իրավունքները ոտնահարվել են:

Դրականի հետ մեկտեղ Ալավերդյանը վտանգներ է տեսնում. «Վտանգն այն է, որ մենք հանկարծ սա չվերածենք տոնակատարության, ինչպես մարտի 8-ը: Իրականում՝ այդ օրը եղել և մնում է կանանց իրավունքների պաշտպանության օր, բայց մենք վեր ենք ածել օժանելիք մվիրելու օրվա: Այդ վտանգը այստեղ էլ կա: Ես միշտ ասել եմ, դեկտեմբերի 10-ը տոնական օր չէ, ընդհակառակը՝ դա օր է, երբ մենք սևեռում ենք մեր ուշադրությունը չլուծված խնդիրների վրա», - նշեց մարդու իրավունքների առաջին պաշտպանը:

**Աղբյուրը՝ [hra.am](http://hra.am)**

# Տեղեկատվության ազատությունը Հայաստանի Հանրապետությունում Մոնիտորինգ 2011

2011թ.-ի դեկտեմբերի 14-ին «Հայելի» ակումբում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հանրությանը ներկայացրեց «Տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում 2011թ.» մոնիտորինգը և դրա արդյունքներն ամփոփող գիրքը:



**Մ**իջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարացման բաժնի ղեկավար Օլիվեր Մկրտչյանը, ով կարևորեց տեղեկատվության մատչելիությունը արդյունավետ կառավարման, իշխանություններին հաշվետու պահելու համար:

«Տեղեկատվության ազատության կիրառումը ՀՀ-ում» ծրագրի ղեկավար, ԻԱԿ փորձագետ Լիանա Դոյրոյանը հավելեց, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը գործում է շուրջ 8 տարի: Վերջին տարիներին ՏԱ օրենսդրության կիրառման պրակտիկայում բավականին շատ փոփոխություններ և դրական արդյունքներ են գրանցվել, և ներկայումս անհարժեշտություն է առաջացել պարզելու, թե ինչպես են տեղեկատվություն տնօրինողները կատարում Օրենքի պահանջները»:

Կենտրոնի իրավաբան Գևորգ Հայրապետյանը նշեց, որ մոնիտորինգը ԻԱԿ-ին հնարավորություն տվեց պարզել տեղեկատվության ազատության

առկա վիճակը Հայաստանում, վեր հանել առկա խնդիրները:

Այսպես, մոնիտորինգի շրջանակում 2011թ.-ի մայիս-հունիս ամիսներին 10 դիմողների կողմից ուղարկվել է 250 հարցում 50 տեղեկատվություն տնօրինող մարմնի՝ 10 պետական կառավարման կենտրոնական մարմին, 10 մարզպետարան, 10 քաղաքապետարան, 10 գյուղապետարան և 10 հանրային նշանակության կազմակերպություն:

250 հարցումների մեծամասնությունը՝ 173 հարցում, ուղարկվել է գրավոր, փոստային առաքմամբ: 37 հարցում ուղարկվել է էլեկտրոնային տարբերակով՝ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեներով և 40 հարցում ներկայացվել է բանավոր՝ հեռախոսազանգերի միջոցով: Տեղեկատվություն տնօրինող յուրաքանչյուր մարմնի ուղարկվել է տեղեկություն ստանալու 5 հարցում:

250 հարցումների 56 տոկոսին տրվել է լիարժեք պատասխան: Սակայն, մյուս կողմից, մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ դեռևս լուրջ խն-

դիր են մնում անպատասխան մնացած հարցումները, որոնք կազմել են ընդհանուր հարցումների 30 տոկոսը: Սա այն դեպքում, երբ մերժումների ընդհանուր թիվը կազմել է ընդամենը 8-ը, որից միայն մեկն է եղել օրինական: Ստացվում է, որ այն բոլոր դեպքերում, երբ մարմինը չի ցանկացել տրամադրել տեղեկատվություն, նախընտրել է ոչ թե գրավոր մերժել դիմողին, այլ պարզապես անպատասխան թողնել հարցումը:

Մոնիտորինգում ընդգրկված 50 տեղեկատվություն տնօրինողներից լավագույն արդյունքը ստացվել է Օշականի գյուղապետարանից, որն իրեն հղած 4 գրավոր և 1 բանավոր հարցմանը տվել է ժամանակին լիարժեք պատասխան (տես՝ <http://www.givemeinfo.am/hy/entity/85/>):

Իսկ բացասական արդյունքները ստացվել են Այգեձորի գյուղապետարանից, «Կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ-ից և «Քեթրին գրուպ» ՍՊԸ-ից: Այս մարմիններն իրենց ուղղված բոլոր 5-ական հարցումները թողել են անպատասխան:

50 մարմիններից լավագույն արդյունքը ցույց են տվել մարզպետարանները, իսկ վատագույնը՝ հանրային նշանակության կազմակերպությունները: Մարզպետարաններն իրենց ուղղված 50 հարցումների 74%-ին են տվել լիարժեք պատասխան, իսկ հանրային նշանակության կազմակերպություններն իրենց հասցեագրված 50 հարցումների միայն 44%-ին են լիարժեք պատասխան տրամադրել, նույնքանն էլ թողել անպատասխան:

Հարկ է նշել, որ մարզպետարանների արձանագրած լավ ցուցանիշը պայմանավորված է նաև այն փաստով, որ մարզպետարանների ներկայացուցիչները բազմիցս մասնակցել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կազմակերպած SU ուսուցումներին:

Այս մոնիտորինգը հնարավորություն տվեց փաստելու, որ տեղեկատվության ազատության ոլորտում առկա հիմնախնդիրները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Հիմնախնդիրներից առաջինը կարելի է նշել պաշտոնյաներից շատերի մոտ բաց աշխատելու մշակույթի բացակայությունը: Նրանց մեծ մասը դեռևս սովոր չէ պարտադիր արձագանքել հասարակության պահանջներին և տեղեկատվություն տալը չի ընկալում որպես իր հիմնական պարտականություններից մեկը:

Թեև անհիմն մերժումները համեմատաբար մեծ թիվ չեն կազմում, սակայն դեռևս որպես մերժման հիմք է ծառայում կառավարության կողմից տեղեկություն տրամադրելու կարգը չընդունելը, ինչը շահարկվում է այն պաշտոնյաների կողմից, ովքեր չեն ցանկանում տրամադրել պահանջվող տեղեկատվությունը: Այդպես, այս մոնիտորինգի ընթացքում ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն մերժել էր պատասխանել իրավաբանի գրավոր հարցմանը: Որպես մերժման հիմք ՀՀ Պետական եկամուտների կոմիտեն նշել էր, որ ՀՀ կառավարության կողմից սահմանված չէ տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման կարգը, ուստի, կոմիտեն չի կարող տրամադրել խնդրված տեղեկությունները:

Խոչընդոտ է շարունակում մնալ նաև հարցումներին ժամանակին պատասխանելու հարցը: Մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին, որ պատասխան ստացած 161 հարցումներից 70.2%-է (113 պատասխան) միայն պատասխան ստացել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում, իսկ 29.8%-ին (46 պատասխան) պատասխանվել է ուշացումով: Հարցումների վերլուծությունը ցույց տվեց, որ տեղեկությունների տրամադրման համար օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը իրատեսական է, և ցանկության դեպքում հեշտությամբ կարելի է պատասխան տալ հենց այս ժամկետում: Եվ հակառակը. եթե մարմինը և դրա ղեկավարությունը չունեն քաղաքական կամք և համապատասխան գիտելիք, միևնույն է տեղեկությունների տրամադրումն առանց հիմնավորման ուշանում է, պատասխանները լինում են թերի, կամ պարզապես հարցումներն անտեսվում են՝ դրանց պատասխանելը համարելով ոչ թե պարտականություն, այլ՝ հավելյալ աշխատանք:

Մոնիտորինգի արդյունքներին կարող եք ծանոթանալ [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) և [www.foi.am](http://www.foi.am) կայքերի «SU վերլուծություններ» բաժնում:

Ներկայացվող գիրքը հրապարակվել է ԻԱԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատության կիրառումը ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում՝ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի և ԱՄՆ ՄՁԳ համաֆինանսավորմամբ:

## ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության դատը հետաձգվեց

2011թ. դեկտեմբերի 8-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում սկսվեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության դատական գործը: Սակայն համատիրության ներկայացուցիչը ոչ միայն դատարանին չէր ներկայացրել հայցադիմումի պատասխանը, այլ նաև չէր ներկայացրել դատական նիստին: Նախնական դատական նիստը հետաձգվեց: Հաջորդ դատական նիստի օրվա մասին դատարանը հավելյալ կժամուցի:

ԻԱԿ-ը դիմել է դատարան՝ պահանջելով պարտավորեցնել Համալսարանականներ համատիրությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաև պարտավորեցնել Համալսարանականներ համատիրությանը հայցվող տեղեկատվությունը հրապարակել հանրության համար մատչելի վայրում: Սակայն համատիրության ներկայացուցիչը ոչ միայն դատարանին չէր ներկայացրել հայցադիմումի պատասխանը, այլ նաև չէր ներկայացրել դատարան:

Նշենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 13 հունիսի 2011 թ. 143-ի 8 թվագրմամբ և 30 հունիսի 2011 թ. 145-ի 3 թվագրմամբ գրավոր հարցում է կատարել Համալսարանականներ համատիրության նախագահ պարոն Արմեն Թադևոսյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ե՞րբ և որտե՞ղ է հրապարակվել «Համալսարանականներ» համատիրության այն ժողովի հայտարարությունը, որի ժամանակ սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:
2. Ե՞րբ և որտե՞ղ է տեղի ունեցել համատիրության նշված ժողովը և համատիրության քանի՞ անդամ է մասնակցել այդ ժողովին:
3. Խնդրում ենք տրամադրել համատիրության այն նիստի արձանագրության պատճեն, որի ընթացքում սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:
4. Խնդրում ենք տրամադրել նաև համատիրության այն որոշման պատճենը, որով սահմանվել են Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման գումարների չափերը:

5. Որո՞նք են սպասարկման գումարների գնագոյացման հիմքերը, համաձայն որոնց սահմանվել են վերոնշյալ գումարների չափերը: Խնդրում ենք տրամադրել յուրաքանչյուր ծառայության դիմաց հաշվարկված գումարի չափերը առանձին առանձին և դրանց համապատասխան հիմքերը:

6. Խնդրում ենք տրամադրել 2011թ. հունիսի 14-ի դրությամբ համատիրության և մասնավոր ընկերությունների կամ անհատների հետ Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի աղբահանության, շենքի մուտքերի և հարակից տարածքների մաքրության, արտաքին լուսավորության, աստիճանավանդակների և միջանցքների լուսավորության, վերելակների պահպանման և այլ ծառայությունների մատուցման համար կնքված պայմանագրերի պատճենները:

7. Խնդրում ենք տրամադրել «Համալսարանականներ» համատիրության 2011 թ. բյուջեի պատճեն:

Սակայն ԻԱԿ-ի հարցումները մնացել են անպատասխան:

ԻԱԿ-ը դիմել է դատարան՝ պահանջելով պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաև պարտավորեցնել «Համալսարանականներ» համատիրությանը հայցվող տեղեկատվությունը հրապարակել հանրության համար մատչելի վայրում:

Հայցադիմումին կարող եք ԻԱԿ-ի ինտերնետային կայքի՝ [www.foi.am](http://www.foi.am), Ռազմավարական դատավարություն բաժնի, Դատական գործեր ենթաբաժնում:



# Աշտարակ կաթն ու Մարիանան տեղեկատվությունը թաքցնելու պատճառ ունեին

2011թ. դեկտեմբերի 16-ին Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կայացրած որոշումից պարզ դարձավ, թե ինչու ԻԱԿ-ի հայցած տեղեկատվությունը չէր տրամադրվում...

**Ի**նֆորմացիայի ազատության կենտրոնը 2 ամիս շարունակ փորձում էր «Աշտարակ-կաթ» և «Դուստր-Մարիանա» ընկերություններից ճշտել, թե իրենց կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՞ կաթնափոշուց: Նաև ցանկանում էր ստանալ ցանկը, թե այդ ընկերությունների կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը? ոչ, և/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է: Սակայն բոլոր հարցումները անպատասխան են մնացել:

Դեկտեմբերի 16-ին Աշտարակ-կաթ և Դուստր-Մարիանա ընկերությունները տուգանվեցին տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՊՀ) կողմից՝ կաթնամթերքում արգելված հավելանյութ օգտագործելու և սխալ մակնշման համար: Հանձնաժողովի ներկայացմամբ՝ այս ընկերություններն իրենց կաթնամթերքում օգտագործել են կոկոսի յուղ, ինչը մասնագետների հավաստմամբ՝ կարող է լուրջ վնաս հասցնել մարդու առողջությանը: Բացի այդ, ապրանքների տուփերի վրա եղած մակնշումները խեղաթյուրված են ներկայացված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դեռևս 2011թ. նոյեմբերին էր սկսել այս հարցերով հետաքրքրվել, Աշտարակ-կաթ և Դուստր-Մարիանա ընկերությունների ուղարկել էր իրենց արտադրանքի բաղադրության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հարցումներ: Սակայն հարցումները մնացել էին անպատասխան: Նույն ճակատագրին էին արժանացել նաև ԻԱԿ-ի կրկնակի հարցումները: Դեկտեմբերի 14-ին Աշտարակ կաթ ընկերությունից կենտրոնին տեղեկացրին, որ իրենք իբր ուղարկել են հարցման պատասխանը և խոստացան նույնն ուղարկել նաև էլեկտրոնային տարբերակով: Սակայն մոտ մեկ շաբաթ տևած բանակցությունների արդյունքում խոստացված պատասխանն այդպես էլ չստացվեց:

Ինչ վերաբերում է Դուստր Մարիանա ընկերությանը, ապա ՏԱ օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ, հեռախոսով հիշեցնելուց հետո միայն դեկտեմբերի 16-ին Դուստր-Մարիանա ՍՊԸ-ի տնօրեն Տ. Վարդանյանի կողմից ստացվեց պատասխան գրություն էլ փոստով՝ հետևյալ բովանդակությամբ. «...Կաթնամթերքի բաղադրության վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր մակնշված է ընկերության կողմից արտադրող կաթնամթերքների յուրաքանչյուր տուփի վրա: Այլ տեղեկություններ հետաքրքրելու դեպքում կարող եք օգտվել մեր ընկերության կայքից՝ [www.mariannadairy.com](http://www.mariannadairy.com)»:

Սակայն ընկերության պաշտոնական կայքում չկար որևէ տեղեկատվություն կաթնամթերքի բաղադրության մասին: Իսկ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումից էլ պարզ դարձավ, որ կաթնամթերքի տուփերի վրայի մակնշումները չեն համապատասխանում իրականությանը:

Հավելենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով դատական կարգով պարտավորեցնելու Աշտարակ կաթ և Դուստր Մարիանա ընկերություններին պատասխանել ԻԱԿ-ի հարցումներին, նաև տեղեկատվություն չտրամադրելու համար նշյալ ընկերությունների տնօրեններին ենթարկելու վարչական պատասխանատվության:

## **ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը մերժեց ՊՈԱԿ-ի բողոքը**

Դատարանի կայացրած որոշմամբ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը պարտավորվել էր ԻԱԿ-ին տրամադրել հայցվող տեղեկությունները:

2011թ. նոյեմբերի 8-ին ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը մերժեց ԻԱԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործով ՊՈԱԿ-ի վերաքննիչ բողոքը:

Հիշեցնենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2009թ. փետրվարի 27-ին «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հարցում է ուղարկում՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2006, 2007 և 2008թթ-ին որքա՞ն գումար է կազմել:
2. ՊՈԱԿ-ը 2006, 2007 և 2008թթ-ին ո՞ր կազմակերպությունների հետ է կնքել հանձնարարության և նկարագրության պայմանագրեր:
3. ՊՈԱԿ-ը 2006, 2007 և 2008թթ-ին որքա՞ն հասույթ է ստացել հանձնարարության և նկարագրության պայմանագրերից:

Հունիսի 20-ին ՀՀ վերաքննիչ դատարանը վճռել էր ոչ իրավաչափ ճանաչել «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի գործողությունները, պարտավորեցնել «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ին հնգօրյա ժամկետում տրամադրելու ԻԱԿ-ի կողմից 27.02.2009թ. հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը և հօգուտ ԻԱԿ-ի բռնագանձել 24.000 դրամ:

Հուլիանք, որ «Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը այլևս անօգուտ չի բողոքարկի դատարանի վճիռը և 3 տարի դատական տարբեր ատյաններում բողոքարկելուց հետո ի վերջո ԻԱԿ-ին կտրամադրի պահանջվող տեղեկատվությունը:

# ԻԱԿ-ը պահանջում է Ձարթոնքի գյուղապետարանի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչել

2012թ. փետրվարի 1-ին, ժամը 16-ին ՀՀ վարչական դատարանում տեղի կունենա ԻԱԿ-ն ընդդեմ Ձարթոնքի գյուղապետարանի դատական գործի քննությունը:

2009թ. փետրվարի 7-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել Արմավիրի մարզի Ձարթոնք համայնքի գյուղապետին՝ խնդրելով տրամադրել.

1. Ձարթոնք համայնքի 2008թ. բյուջեն,
2. Ձարթոնք համայնքի 2008թ. բյուջեի կատարման հաշվետվության պատճեն:

Ձարթոնքի գյուղապետը չի պատասխանել ԻԱԿ-ի հարցմանը:

2009թ. մարտի 20-ին ԻԱԿ-ը տեղեկատվություն տրամադրել պարտադրելու և վարչական տույժի ենթարկելու պահանջների մասին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանը մասամբ է վարույթ ընդունել ԻԱԿ-ի հայցը՝ մերժելով Ձարթոնքի գյուղապետին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջը: 23.04.2009թ.-ին ԻԱԿ-ը բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով վերացնել ՀՀ վարչական դատարանի դատավորի որոշումը՝ Ձարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժելու մասը:

Ապրիլի 28-ին ՀՀ վարչական դատարանը (նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան) բավարարեց ԻԱԿ-ի բողոքը, որով հիմնավորեց, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կարող է դիմել դատարան՝ պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու հայցապահանջով: Հուլիսի 30-ին կայացած դատական նիստի ժամանակ ԻԱԿ ներկայացուցիչ Կարեն Մեժլումյանը հրաժարվեց հայցի՝ տեղեկատվություն տրամադրել պարտավորեցնելու և Ձարթոնքի գյուղապետին 50.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներից: Սակայն պնդեց Ձարթոնքի գյուղապետի անգործու-

թյունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին պահանջը: Օգոստոսի 13-ին ՀՀ վարչական դատարանը /Նախագահող դատավոր՝ Ա. Ծատուրյան/ վճռեց կարճել ԻԱԿ-ն ընդդեմ Ձարթոնքի գյուղապետարանի վարչական գործի վարույթը, քանի որ ԻԱԿ ներկայացուցիչը հրաժարվել էր հայցի երկու պահանջներից, իսկ դատարանն էլ գտել էր, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման նաև ԻԱԿ-ի այն պահանջի մասով, որը վերաբերում է Ձարթոնքի գյուղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելուն, քանի որ դատավոր Ա. Ծատուրյանը գտնում էր, որ «ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցատեսակ չի սահմանում, հետևաբար այդ պահանջով վարչական դատարանը իրավասու չէ»:

Ի դեպ, սա առաջին դեպքն է, երբ ՀՀ վարչական դատարանը մերժել է տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը: ԻԱԿ-ի բազմաթիվ հայցեր՝ նշյալ պահանջով, բավարարվել են ՀՀ վարչական դատարանի կողմից:

15.09.2009թ ԻԱԿ-ը վճռաբեկության կարգով բողոքարկեց ՀՀ վարչական դատարանի վճիռը՝ ՀՀ վճռաբեկ դատարանից խնդրելով բեկանել ՀՀ վարչական դատարանի 13.08.2009թ. թիվ ԿԴ 4/0074/05/09 վճռի՝ Ձարթոնքի գյուղապետարանի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին պահանջով գործի վարույթը կարճելու մասը, այն փոփոխել և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի այդ հայցապահանջը բավարարել: ՀՀ վճռաբեկ դատարանը 22.04.2010թ. ԻԱԿ-ի բողոքն ամբողջությամբ բավարարեց և գործն ուղարկեց նոր քննության:

## **Արդյոք մատչելի՞ է «ԴատաԼեքսը»**

«ԴատաԼեքս» հանրային տեղեկատվական կայքէջում 7 ենթաբաժիններից 6-ը չեն գործում, կամ թերի են:

**Դ**ատաԼեքս կայքէջից՝ [www.datalex.am](http://www.datalex.am), երևում է, որ համակարգի մշակմանը ֆինանսական և տեխնիկական օժանդակություն են ցուցաբերել ՀՀ կառավարությունը, Նիդերլանդների Թագավորության կառավարությունը, Համաշխարհային Բանկը: Այդ օժանդակության մեծ մասը վարկի տեսքով է տրամադրված: Այսինքն՝ ՀՀ պետությունը՝ քաղաքացիները, պարտավորված են այս ծրագրի համար վերադարձնել վերցված գումարը տոկոսով, հետևաբար, իրավունք ունեն խստագույնս մոտենալ այդ համակարգի ծառայությունների որակին և արդյունավետության քննարկմանը:

Ինչպես նշված է «ԴատաԼեքս» տեղեկատվական կայքէջում՝ «ԴատաԼեքսը» էլեկտրոնային կառավարման և տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգ է, համաձայն որի քաղաքացուն հնարավորություն է տրվում իրական ռեժիմում ստանալ տեղեկություններ բոլոր դատարաններում քննվող գործերի մասին և տրամադրում է մի շարք այլ ծառայություններ ըստ հետևյալ բաժինների՝ դատական գործերի որոնում, նիստերի ժամանակացույց, ՀՀ օրենքների որոնում, դիմումների առցանց համակարգ, առցանց վճարումներ, հաճախ տրվող հարցեր: Պատկերը շատ գայթակղիչ է. ՀՀ քաղաքացուն հնարավորություն է տրվում իրական ռեժիմում տեղեկացված լինել դատարաններում քննվող գործերից: Սակայն վերլուծության արդյունքում պատկերն անմիջապես փոխվում է.«ԴատաԼեքսը» չի կարող համարվել կառավարման համակարգ՝ չկա աշխատանքի պլանավորում, ֆունկցիաների կազմակերպում, դիտվում է տեղեկատվության պակաս, որոշ նյութեր ի սպառ բացակայում են. օրինակ՝ սահմանադրական դատարանի որոշումները:

Այժմ փորձենք վերլուծել «ԴատաԼեքս» տեղեկատվական կայքի մատչելիությունն ըստ ստորև նշված բաժինների:

1. «Դատական գործերի որոնում» բաժնում նախատեսվում է իրականացնել որոնում ըստ

հետևյալ գործոնների՝ դատական գործի տիպ, համար, դատարանի անուն, դատավորի անուն, հայցվորի անուն, պատասխանողի անուն, դիմման ամսաթիվ, դատական գործի առարկա, դատարանի որոշման ամսաթիվ, հողված և այլն..., որի արդյունքում պետք է տրամադրվի գործի ընթացքի և դատարանի կայացրած վճռի մասին մանրամասն տեղեկություն: Այնինչ, տվյալ բաժնում որոնում կատարելիս պարզվում է, որ դատական գործի տիպե և հողվածե գործոնները բացակայում են: Նշեն, որ գործը կրում է շարունակական բնույթ, սակայն կարելի է գտնել գործի միայն մի մասը (մեր դիտարկված օրինակում գործը կարելի է գտնել միայն առաջին ատյանի դատարանում, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների որոշումները ի սպառ բացակայում են): Համակարգը ճկուն չէ և ժամանակին չի թարմացվում, օրինակ՝ 17.08.2011թ. նիստից 4 օր հետո տեղեկատվական կայքում որևէ տեղեկություն չկա, իսկ 30.08.2011թ.-ին բողոք ներկայացնելուց հետո կրկին /գրանցված/ որևէ տեղեկություն կամ պատասխան չկա:

2.«Նիստերի ժամանակացույց» բաժնում դատարանի ժամանակացույցին ծանոթանալու համար դատական նիստերի անցկացման վայրի և գործի տիպի մասին տվյալները բավարար չեն, պահանջվում է նշել նաև դատաքննության ամսաթիվը:

3.«Նմանատիպ գործերի որոնում» բաժնի ծառայություններից օգտվելու համար պահանջվում է գրանցվել համակարգում, որից հետո պարզվում է, որ «Ծառայությունը գտնվում է վերամշակման փուլում»: Նմանատիպ գործերի համեմատական վերլուծություն հնարավոր չէ կատարել: Կարծում ենք՝ սա «ԴատաԼեքսի» ծառայություններից օգտվողների իրավունքների կոպիտ խախտում է. վարչակազմն այս կերպ կեղծ տվյալներ է հավաքագրում վարկատուների, համակարգի մշակմանը ֆինանսական և տեխնիկական օժանդակություններ կայացնողների աչքակապության համար:

4. «ՀՀ օրենքների որոնում» բաժնում որոնումը կատարվում է «ԱՐԼԻՍ» Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի ձևով, սակայն .բա-

նալիե բառերը չեն ընդգծվում և օգտվողը ստիպված է որոնման լրացուցիչ միջոցներ ձեռնարկել:

5.«Դիմումների առցանց համակարգ» բաժնում դիմումների առցանց ուղարկման ծառայությունը /պաշտոնական/ չի գործում՝ «օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության պատճառով»:

6.« Առցանց վճարումներ» ծառայությունը ժամանակավորապես չի գործում օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության պատճառով:

7. Վերլուծություններ կամ վիճակագրություն իրականացնելու հնարավորություն չկա, օրինակ՝ գտնել որոշակի գործունեությունն անան դատական գործեր:

8. Դատարաններն արդարադատությունն իրականացնում են ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերին և օրենքներին համապատասխան: Սակայն բացակայում են միջազգային պայմանագրերի, ՀՀ կողմից վավերացված կոնվենցիաների տեքստերը, որոնք առնչվում են ՀՀ օրենսդրությանը և կոնկրետ գործերին: Բացակայում են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, որոնք առնչվում են ՀՀ օրենսդրությանը, դատական գործերին և միջազգային պայմանագրերին:

9. Տեղադրված չեն դատավորների և փաստաբանների կենսագրությունները (պահանջվում է լրացուցիչ աշխատանք դատավորների կենսագրությունները Հայաստանի դատական համակարգում որոնելու համար՝ [www.court.am](http://www.court.am)): Հնարավոր չէ ստանալ դատարաններից որոշակի տեղեկություն կամ հարցերի պատասխաններ, բաժանորդագրվել նորությունների համար: Բացակայում են տարբեր դիմումների և հայցերի էլեկտրոնային նմուշները:

10.ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենքների կամ նորմատիվ ակտերի մեկնաբանությունները տեղադրված չեն:

11. Վճռաբեկ դատարան բողոքարկող անձը չունի հնարավորություն տեղեկանալու դիմումին առնչվող գործի ընթացքին:

12. Բացակայում է հիմնական իրավական տերմինների բացատրական բառարանը:

13. Բացակայում է «Օգնություն» կամ «Ուղեցույց» բաժինը:

14. Լեզուն փոխելու հնարավորությունը տեղադրված է /անգլերեն, ռուսերեն/, սակայն փաստացի չի գործում, վճիռները թարգմանված չկան:

15.«ԴատաԼեքս» հանրային տեղեկատվական համակարգը նշակվել է ,Դատաիրավական բարեփոխումներե ծրագրի շրջանակներում: Սակայն «Կարդալ ավելին» հղումը չի գործում:

Այսպիսով, վերլուծելով «ԴատաԼեքս» տեղեկատվական կայքէջը, հանգում ենք այն եզրակացության, որ «ԴատաԼեքս» հանրային տեղեկատվական կայքէջում 7 ենթաբաժիններից 6-ը չեն գործում, կամ թերի են: Դատական բարեփոխումների վարկային ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում «Access to Legal Info and Public Awareness» ենթաբաժնի համար, որը ներառում է «ԴատաԼեքս» համակարգը, միայն Համաշխարհային Բանկից ստացած վարկը կազմել է 1 230 000 ԱՄՆ դոլար (տես՝ [www-wds.worldbank.org](http://www-wds.worldbank.org)): 2011թ. մայիս ամսվա տվյալների համաձայն Հայաստանի իրավական ռեսուրսների 49 վեբ կայքերի վիրտուալ ինտելեկտուալ կապիտալի ինդեքսի (QI, Arcaler Scorecard) համեմատական ցուցանիշների աղյուսակում «ԴատաԼեքս»-ը զբաղեցնում է 18-րդ տեղը, «ԱՐԼԻՍ» Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը ([www.arlis.am](http://www.arlis.am))՝ 5-րդ տեղը, իսկ Հայաստանի դատական համակարգը ([www.court.am](http://www.court.am))՝ 6-րդ տեղը (տես՝ [http://www.iatp.am/arcaler\\_scorecard/xls/pravir\\_ar\\_m.htm](http://www.iatp.am/arcaler_scorecard/xls/pravir_ar_m.htm)): Այդ ցուցանիշները չեն վկայում «ԴատաԼեքս»-ի ծառայությունների բարձր որակի և արդյունավետության մասին՝ հաշվի առնելով նաև, որ ծրագրի ավարտին մնացել է քիչ ժամանակ:

**Ռուզան Մինասյան**  
**«Առավոտ» օրաթերթ**

# Պաշտոնյաների նպատակը ոչ թե վնասի փոխհատուցումն է, այլ լրատվամիջոցը լռեցնելը

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի, խոսքի ազատության, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի, լրագրողական էթիկայի հարցերի շուրջ HayNews.am-ը գրուցեց Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (ԻԱԿ) տնօրեն Շուշան Դոյրոյանի հետ:

**- Ձեր կարծիքով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով սահմանված տուգանքների չափը տեղեկատվության ազատության սահմանափակումն է:**

**Շ.Դ.** -Օրենքով սահմանված է, որ մարդու պատիվն ու արժանապատվությունը կարևոր արժեքներ են, որը պիտի կարգավորվի իրավական ոլորտում: Ենթադրվում է, որ օրենսդրության նպատակը այն պիտի լիներ, որ փորձեր հավասարակշռել մարդու պատվի, արժանապատվության և խոսքի ազատության իրավունքները: Բայց, հավասարակշռություն սահմանելու փոխարեն այս օրենքը ավելի շատ սրել է հակասությունները: Արդյունքում, պաշտոնյային ուղղված ամենահասարակ քննադատության դեպքում ոչ միայն լրագրողը կարող է լուրջ պատասխանատվության ենթարկվել, այլ ուղղակի կասկածի տակ կարող է դրվել տվյալ լրատվամիջոցի գոյությունը: Սա ոչ միայն օրենքի, այլև իրավակիրառողի խնդիրն է. օրենքի ոչ հստակ ձևակերպված լինելու պատճառով դատարանները հաճախ օրենքը ենթարկում են տարածական մեկնաբանության և կիրառում այնպես, ինչպես հայցվոր կողմի փաստաբանն է պահանջում: Բայց սա ոչ թե լրատվամիջոցի դեմ ուղղված պատժաձև է, այլ ուղղակի փոխհատուցում է այն վնասի, որը կրել է տվյալ մարմինը: Նույնիսկ տարբեր հայցվորների փաստաբաններ հրապարակավ դատարանում հայտարարել են, թե ես պիտի փակել տամ այս թերթը, թեկուզ ինձ այդ փողը պետք էլ չէ: Այսինքն՝ իրենց նպատակը ոչ թե կրած վնասի փոխհատուցումն է, այլ լռեցնելու տվյալ լրատվամիջոցը, ինչը հակասում է ժողովրդավարության ձգտող հասարակության պահանջներին: Բայց եթե դու վնաս չես կրել, փոխհատուցման կարք չունես, էլ ինչու՞ ես դիմել դատարան: Այս առումով արժևորում են այն փոփոխությունը, որ դրամական փոխհատուցում նշանակելիս դատարանը պիտի հաշվի առնի տվյալ լրատվամիջոցի գույքային

հնարավորությունների չափը: Կարևոր է նաև այն, որ լրագրողը պատասխանատվության չի ենթարկվում նաև իր արտահայտած գնահատողական վերաբերմունքի համար, քանի որ անհմար է պահանջել լրագրողից ապացուցելու իր կարծիքի ճշմարտացիությունը: Նշեն նաև, որ մեզանում երբևէ չի կիրառվում վնասի փոխհատուցման այլ պատժամիջոցները՝ հրապարակավ ներողություն խնդրել կամ կան օգտվել հերքման և պատասխանի իրավունքից:

**-2003 թվականից գործող «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը ինչքանով է կիրառվում է հասարակության տարբեր խավերի մարդկանց կողմից և ի՞նչ բացեր ունի:**

**Շ.Դ.** -Արդեն 8 տարի է օրենքը կիրառվում է և, միանշանակ, հսկայական առաջընթաց է ապրել: Աստիճանաբար ձևավորվում է բացության, հրապարակայնության մշակույթը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների շրջանում: Նախկինում հրապարակայնություն բառը շփոթեցնում էր պաշտոնյաներին և բնագոյանաբար փակվելու ցանկություն էին ունենում, այսօր գոնե արտաքինապես փորձում են ցույց տալ, որ աշխատում են հրապարակային ու բաց: Մյուս կողմից, քաղաքացիական ծառայության մակարդակում աշխատակիցների մի ստվար զանգված այսօր անցել է համապատասխան վերապատրաստում տեղեկատվության ազատության ոլորտում: Այդ գործընթացն իրականացվում է մեր կենտրոնի՝ ԻԱԿ-ի և Քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ: Արդյունքում, այն հիմնական բացը, որ պաշտոնյան չիմանալով էր խախտում քաղաքացու՝ ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքը, այսօր այդ խնդիրը մեծ մասամբ լուծված է: Կարևոր է այն, որ ոչ թե աշխատակիցներ ըստ իրենց ցանկության են մասնակցում վերապատրաստումներին, այլ նախարարության համա

” Արդեն 8 տարի է օրենքը կիրառվում է և, միանշանակ, հսկայական առաջընթաց է ապրել: Աստիճանաբար ձևավորվում է բացության, հրապարակայնության մշակույթը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների շրջանում:

պատասխան հրամանով: Բայց, իհարկե, լուրջ խնդիրներ դեռևս առկա են հատկապես մեծումների հիմնավորման առումով, ինչը ցույց են տալիս գրեթե մեկ ամիս առաջ անցկացված մոնիտորինգի արդյունքները: Նշենք, որ այս մոնիտորինգի բացառիկությունը նրանում էր, որ ոչ թե մեր կենտրոնն էր ուղղարկել հարցումները, այլ ուսանողներ, լրագրողներ կամ պարզապես քաղաքացիներ: Եթե վերցնեիք միայն մեր կենտրոնից ուղղարկված հարցումները, այդ դեպքում մոնիտորինգը ցույց չէր տա իրական վիճակը: Ուղղարկված 250 հարցումներից 56%-ին տրվել է լիարժեք պատասխան, 3.6%-ը վերահասցեագրվել է այլ մարմնի, 1.6%—ին տրամադրվել է թերի պատասխան, 2.8% —ը մերժվել է անհիմն, 5.6%-ը չի հասել տեղեկատվություն տնօրինողին, իսկ 30%-ը մնացել է անպատասխան: 30% լուռ մերժումները ցույց են տալիս, որ պետական պաշտոնյան ցանկացել է մերժել, բայց քանի որ համապատասխան տեղեկատվությունը ենթակա է հրապարակման, նա ընտրել է անտեսելու տարբերակը, այն դեպքում, երբ 250 հարցումներից ունենք ընդամենը մեկ գրավոր հիմնավոր մերժում: Այս առումով խնդիրն է նաև այն, որ էլեկտրոնային հարցումները այսօր կարգավորված չեն օրենսդրությամբ, հետևաբար, շատ դեպքերում անտեսվում են, բայց, իհարկե, տեխնոլոգիական զարգացման հետ զուգընթաց պաշտոնյաները ստիպված են հաշվի նստել նաև այս կետի հետ: «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը ամենօրյա լրատվության համար չէ, այլ քաղաքացիների և հետաքննող լրագրողների, քանի որ օրենքը 5-օրյա ժամկետ է նախատեսում: Բայց, իհարկե, բանավոր հարցումների դեպքում օրենքը նախատեսում է որոշակի դեպքեր, երբ

պարտավոր են պատասխանել, մասնավորապես երբ տվյալ տեղեկատվության չտրամադրումը վտանգելու է տվյալ մարդու առողջությունը կամ որևէ հանրային վտանգ է ներկայացնելու: Բոլոր դեպքերում, նախընտրելի է գրավոր հարցում ուղղարկելը, որպեսզի հետո հնարավորություն ունենաք թերի, ոչ ճշգրիտ պատասխանի դեպքում բողոքարկել: Մյուս կողմից, օրենքի խախտումներ առկա են հատկապես ժամկետների դեպքում: Որոշ պաշտոնյաներ պնդում են՝ թե սահմանված 5-օրյա ժամկետում չեն հասցնում պատասխանել: Մինչդեռ, մոնիտորինգի արդյունքում ժամանակին ստացված պատասխանները կազմում են 45.2%, ինչը ցույց է տալիս, որ սահմանված ժամկետը իրատեսական է և ցանկության դեպքում միանշանակ հնարավոր է պատասխանել այս ժամկետում: Իսկ մյուս կողմից մոտ 20%-ը ուշացած պատասխաններն են, ինչը ցույց է տալիս, որ այս առումով նույնպես խնդիրներ կան:

**-Ինչքանով է հայ լրագրողը իրազեկված իր իրավունքների մասին և ո՞ր մասն է պայքարում դրանց վերականգնման համար:**

**Շ.Դ.** -Ցավոք, շատ քչերն են այս մասին իրազեկված, իսկ, մյուս դեպքում էլ, հետամուտ չեն վերականգնելու իրենց խախտված իրավունքները: Իհարկե, շատ դեպքերում լրագրողը չունի ժամանակ զբաղվելու այս խնդրով, բայց կան մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք նրանց փոխարեն կզբաղվեն այս խնդրով: Յենց մեր կենտրոնը զբաղվում է այս հարցերով: Օրինակ, «Առավոտ» օրաթերթի լրագրող Արամ Զաքարյանի հետ անցկացրինք 2 համատեղ դատական գործ:

**- Ամեն տարի ԻԱԿ-ը անցկացնում է մրցանակաբաշխություն, որի ժամանակ տրվում են «Ոսկե բանալի»՝ բացություն և «Ժանգոտ կողպեք»՝ փակություն խորհրդանշող մրցանակները: Այս մրցանակները զգոնացնու՞մ են պաշտոնյաներին:**

**Շ.Դ.**-Տարեցտարի այս մրցանակների ուժը մեծանում է: Նույնիսկ որոշ կառույցներ կոնկրետ քայլեր են անում «Ոսկե բանալի» մրցանակին արժանանալու համար: Միանշանակ, կարող են ասել, որ սա ունի իր զգոնացնող ազդեցությունը:

- **Խոսքի ազատությունը ինչքանով է սերմանված հայ հասարակության գիտակցության մեջ:**

**Շ.Ռ.** -Լայն հասարակության մեջ, ցավոք, քիչ են տեղեկացված այս մասին: Բայց, իրենց սահմանադրական իրավունքների մասին հասարակությանը տեղեկացնելու դերը պիտի ստանձնեն լրագրողները և հասարակական կազմակերպությունները: Օրինակ՝ մենք անցկացնում ենք հեռուստահաղորդումներ և մի շարք ծրագրեր, բայց, իհարկե, այս խնդիրը մեկ կազմակերպության լուծելու գործը չէ:

- **ԻՎԿ-ի 10-ամյա գործունեության ընթացքում ի՞նչն էք համարում Ձեր գլխավոր ձեռքբերումը:**

**Շ.Ռ.** -Չատկապես կարևորում են մեր կողմից իրականացվող կրթական գործընթացը: Այժմ կենտրոնացած ենք պաշտոնյաների վերապատրաստման վրա, բայց զբաղվում ենք ընդհանրապես հասարակության բոլոր խավերի անձանց տեղեկացնել իրենց՝ ինֆորմացված լինելու իրավունքի մասին: Մյուս կարևոր կետն էլ դատական բողոքարկումների գործընթացն է: Մինչ օրս մենք անցկացրել ենք 28 դատական գործ: Վստահաբար կարող ենք ասել, որ ոչ մի մարմին չի ցանկանում հայտնվել պատասխանողի դերում: Այստեղ հատկապես անհասկանալի է պաշտոնյաների այն գործելաոճը, որ կարող են մեծ գումարներ ծախսել բողոքարկման գործընթացներում, միայն թե հրապարակային չդարձնեն տվյալ ինֆորմացիան: Որպես պետական հարկադրանքի միջոց՝ դատական գործընթացների ազդեցությունն ավելի ուժեղ է, բայց տևականության առումով կրթական գիտելիքը, իհարկե, ավելի մեծ ուժ ունի:

- **Ըստ Ձեզ, ինչքանով են հայ լրագրողները պահպանում լրագրողական էթիկայի կանոնները:**

**Շ.Ռ.** -Այսօր մեր լրատվաշուկայում մեծագույն խնդիր է լրագրողների կողմից էթիկական նորմերի անտեսումը: Նախ, շատ քիչ լրագրողներ են տեղյակ էթիկական նորմերի մասին, շատ քիչ լրատվամիջոցներ են ստորագրել համապատասխան վարքականոցներ: Արդյունքում, ունենում ենք անպատասխանատու լրագրողներով հագեցած լրատվական դաշտ՝ անպատասխանատու հայտարարություններ, ներխուժում մարդկանց անձնական կյանք, անձնական վիրավորանքներ: Բայց, իհարկե, այս խնդիրները պիտի լուծվեն ոչ դատարաններում, այլ արտադատական մեխանիզմների միջոցով, ինչը ավելի արդյունավետ և ավելի երկարաժամկետ ազդեցություն ունեցող գործիք է: Կան այդպիսի մի քանի մարմիններ՝ «Էթիկայի դիտորդ մարմիններ, որը քննում է դատական վեճերի էթիկական կողմը, «Տեղեկատվական վեճերի խորհուրդ»-ը, որը քննում է վեճերի դատական կողմը:

*Լիլիթ Պետրոսյան  
Աղբյուրը՝ HayNews.am*



# Նվեր լրագրողին. հայաստանյան մեդիաները տարբեր դիրքորոշումներ ունեն

Լրագրողական էթիկայի վարքականոնի համաձայն՝ լրագրողը պետք է խուսափի շահերի հնարավոր բախումից՝ հրաժարվելով տեղեկատվական աղբյուրների նվերներից եւ գումարից:

**Ա**ՄՆ-ի մեդիաների էթիկայի վարքականոնները լրագրողներին պարտավորեցնում են քաղաքավարի հրաժարվել տեղեկատվության աղբյուրի նվերներից՝ բացառությամբ չնչին արժեք ունեցող նվերների, ինչպիսիք են գրքերը, սկավառակները, տեսաերկերը, մատիտները և այլն, և չընդունել դրանց արժեքից ավել արժեք ունեցող նվերներ, ինչպիսիք են օրինակ՝ մի շիշ լիք-յորը կամ գինին:

Այն դեպքում, երբ նվերը չընդունելը կդիտվի որպես անշնորհքություն, ընդունել և նվիրել որպես բարեգործություն՝ հետագայում նվիրողին տեղեկացնելով լրատվամիջոցի քաղաքականության մասին:

Հայաստանյան մեդիաները լրագրողական էթիկայի վերաբերյալ միասնական դիրքորոշում չունեն:

«Հետք»-ի խմբագիր Էդիկ Բաղդասարյանի խոսքերով՝ իրենք հրաժարվում են որևէ նվեր վերցնելուց կամ որևէ կուսակցության, ընկերության կամ գերատեսչության կազմակերպած խնջույքների մասնակցելուց:

«Դա այնքան համատարած է, որ շատերը չգիտեն էլ, որ էթիկական խախտում է: Իրենց ոչ մեկը չի ասում: Խմբագիրը պետք է այդ որոշումը կայացնի»,- ասում է Հետքի խմբագիրը:

«Երկիր Մեդիա» հեռուստաընկերության լրատվական և քաղաքական հաղորդումների տնօրեն Գեղամ Մանուկյանը գտնում է, որ նվեր ընդունելը իրենց լրագրողներին չի կաշկանդում օբյեկտիվ լուսաբանելու հարցում:

«Եթե նյութի մեջ տեսնեմ, որ այդ նվերը ազդեցություն կունենա նյութի վրա, լրագրողին կասեմ, որ փոխի նյութը, բայց մեր հեռուստադիտողը կտեսնի, որ նման բան չկա»,- ասում է նա:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանը գտնում է, որ հնարավոր չէ

նվեր ընդունելիս մնալ անաչառ, նվերի գործոնը ազդեցություն է ունենում ոչ միայն լրագրողի, այլև ամբողջ լրատվամիջոցի քաղաքականության վրա:

«Լրագրողական էթիկայի տեսանկյունից աններելի և անընդունելի է որևէ տեսակի նվեր կամ ծառայություն ընդունելը: Որևէ արդարացում կամ ներողություն այդ քայլն ընդունող լրատվամիջոցի համար էթիկան չի կարող ընդունել»,- ասում է նա:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահը գտնում է, որ յուրաքանչյուր լրատվամիջոց ինքն իր մեջ պետք է որոշի, որ ինքը էթիկապես գործող լրատվամիջոց է, ունենա իր վարքականոնը, իսկ յուրաքանչյուր լրագրող, ով կգնա այնտեղ աշխատելու, պետք է ստորագրի և հետևի այդ վարքականոնին: Խախտում արձանագրելու դեպքում լրագրողը պետք է հրաժեշտ տա տվյալ լրատվամիջոցին:

«Հիմա իրավիճակն ավելի է սրվելու, որովհետև առաջիկայում սպասվում են երկու լարված ընտրություններ: Այդ ծառայությունները, շնորհները բազմապատկվելու են, և ով ոնց կարող է, փորձելու է ազդել լրագրողների վրա՝ կաշառքի կամ հրապարակային միջոցառումներ, քեֆերի, համերգների ձևով»,- ասում է նա: Շուշան Դոյդոյանի կարծիքով՝ լրագրողների կողմից նվերներ ընդունելն արդյունք է նաև ցածր վարձատրության:

«Լրագրողը բարձր վարձատրվում է այն բանի համար, որ զերծ մնա կողմնակի ազդեցություններից: Իսկ մեր լրատվամիջոցները շատ փոքր գումար են վճարում լրագրողներին: Եվ լրագրողին այլ ճար չի մնում, քան հույսը դնել կողմնակի եկամուտների վրա և գնալ նվերների հետևից»,- ասում է նա:

Այն դեպքերում, երբ լրագրողը կամ լրատվամիջոցը չի կարող նվերը չընդունել, Շուշան Դոյդոյանն առաջարկում է վերցնել նվերը և «մարել պարտքը»՝ պատասխան նվեր ուղարկելով նվիրողին:

www.foi.am

«Երբեք որևէ խմբագրություն կամ լրագրող չպետք է պարտք մնա, որ այդ պարտքը փոխհատուցի բովանդակությամբ,- ասում է նա:

2007 թվականին Հայաստանյան 44 մեդիաներ ընդունել և ստորագրել են լրագրողական էթիկայի վարքականոն, որի սկզբունքներից մեկի համաձայն՝ խմբագրական անկախությունը պահպանելու համար պետք է «հրաժարվել տեղեկություններ հրապարակելու կամ չհրապարակելու համար խոստացվող վճարներից, նվերներից, ինչը մասնագիտական անկախության հետ հակասության մեջ է մտնում և հանգեցնում է վստահության կորստի»:

Վարքականոնը ստորագրած մեդիայի կողմից թույլ տրված էթիկական խախտումը քննում է 7 անդամից բաղկացած լրատվամիջոցների էթիկայի Դիտորդ մարմինը բողոքի առկայության դեպքում:

Բողոքը քննելուց հետո Դիտորդ մարմինը տալիս է իր եզրակացությունը, որը խախտում կատարած մեդիան պարտավոր է հրապարակել կամ հեռարձակել:

*Աղբյուրը՝ [www.media.am](http://www.media.am)*

Այս անձինք խախտել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի եւ քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը 2011 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում:

- **«Համալսարանականներ» համատիրություն**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի օգոստոսի 6-ին գրավոր հարցմամբ դիմել է «Համալսարանականներ» համատիրությանը՝ խնդրելով տեղեկություններ Ծարավ Աղբյուրի 55/5 շենքի սպասարկման վերաբերյալ, ինչպես նաև խնդրելով համատիրության կանոնադրության պատճենը: ԻԱԿ-ի հարցումը մնացել է անպատասխան:

- **«Եռյակ» համատիրություն**

ԻԱԿ-ը 2011թ.-ի օգոստոսի 6-ին փոստով ուղարկված գրավոր հարցմամբ «Եռյակ» համատիրությունից տեղեկություններ էր խնդրել համատիրության գործունեության վերաբերյալ: Համատիրությունը ԻԱԿ-ի հարցումը թողել է անպատասխան:

- **«Հ և Հ» համատիրություն**

ԻԱԿ-ը 2011թ.-ի օգոստոսի 6-ին փոստով գրավոր հարցում էր ուղարկել «Հ և Հ» համատիրությանը՝ խնդրելով տեղեկություններ համատիրության գործունեության վերաբերյալ: Համատիրությունը ԻԱԿ-ի հարցումը թողել է անպատասխան:

- **«Ավան» համատիրություն**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի օգոստոսի 6-ին փոստով ուղարկված գրավոր հարցմամբ դիմել է «Ավան» համատիրությանը և խնդրել տեղեկություններ համատիրության գործունեության վերաբերյալ: Համատիրությունը ԻԱԿ-ի հարցմանը չի պատասխանել:

- **Այգեծորի գյուղապետարան**

ԻԱԿ-ը 2011թ.-ի մայիսի 10-ին դիմել էր Այգեծորի գյուղապետարանին և խնդրել էր տրամադրել Այգեծորի ավազանու 2011թ.-ի նիստերի արձանագրությունների պատճենները: Գյուղապետարանը ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: 2011թ.-ի սեպտեմբերի 14-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցմամբ նորից դիմեց գյուղապետարանին? խնդրելով տրամադրել վերոնշյալ տեղեկությունները: Սակայն ԻԱԿ-ի կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան:

- **ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի հոկտեմբերի 19-ին փոստով գրավոր հարցում էր ուղարկել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ 2010թ.-ին նախարարության կողմից գաղտնագերծված փաստաթղթերի մասին: Սա կրկնակի հարցում էր, քանի որ նախարարությունը չէր պատասխանել ԻԱԿ-ի 29.03.2011թ.-ի հարցմանը գաղտնագերծված փաստաթղթերի վերաբերյալ: Այս կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան:

- **«Աշտարակ կաթ» ՓԲԸ**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 07.11.2011թ.-ին դիմել էր «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ կազմակերպության արտադրանքի վերաբերյալ: Սակայն ԻԱԿ-ի հարցումը մնացել է անպատասխան:

- **«Դուստր Մարիաննա» ՍՊԸ**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 18.11.2011թ.-ին դիմել էր «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ կազմակերպության արտադրանքի վերաբերյալ: Առաջին հարցումը կազմակերպությունը թողել է անպատասխան: ԻԱԿ-ը ուղարկել է կրկնակի հարցում, որին ՍՊԸ-ն ժամկետների խախտմամբ տրամադրել է թերի և անհիմն պատասխան:

## Freedom of Information in Armenia in 2011

Interview with founding president of Freedom of Information Center of Armenia  
Shushan Doydoyan

**- On a scale of 10 how would You rate freedom of information in Armenia in 2011?**

**Sh.D.-** During the year of 2011 Freedom of Information Center of Armenia came up with numerous innovative initiatives in the freedom of information sphere. Particularly, the websites of all the ARM Regional Administrations and the ARM Ministry of Territorial Administration were modernized, and [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) monitoring web project was launched. During the year in the Freedom of Information Non-Formal Educational Center our specialists trained 340 civil and public servants about the freedom of information sphere. Meanwhile, the FOICA has started new court cases against those authorities, which have violated our access to information right. So, there still is enormous work to be done towards the development of the sphere. Hence, I would rate it 7 on a scale of 10.

**- 2012 is a year of elections. What do You think, will mass media outlets do emphasized propaganda or anti-propaganda, and in general, what role will the freedom of speech have in mass media?**

**Sh.D.-** 2012 will really be a challenging year for mass media outlets. Unfortunately, in today's media sphere there is a special treatment for certain politicians and institutions – both negative and positive. In my opinion these attitudes will be more deeply felt especially in the pre-election period. The freedom of speech will more often be violated, and particularly the number of court cases against the press will increase. Self-censorship will increase even more among media outlets.

**- The Internet coverage in our country has been rather broadened in the recent years. What do You think, will internet media be able to change anything in this election year, and in general, what impact will they have?**

**Sh.D.-** In this election year electronic media will play a significant role. They are more independent in their publications, more unrestricted, however, at the same time, freedom of speech abuses are more obvious and oftener here, because of the uncontrollability of their speech. Slander will flood the electronic press. However, the electronic press will provide platforms for free and unrestricted political alternative speech.

**- What is the tendency? Does freedom of information undergo progress or regress from year to year?**

**Sh.D.-**Indeed, freedom of information is progressing. From year to year the government system is becoming more and more transparent and public, and an e-government system has already been installed. However, this year we carried out a large-scaled monitoring, which showed that 30% of information requests stay unanswered. This is a very alarming indicator. Of course, the guilty receive very strict public criticism, they appear in courts as a result of the court cases that we start, and they provide the information in courts.

***By` Tor.am***

## **The launch of training courses for community servants**

Since 2008 the Freedom of Information Center of Armenia, together with the Armenian Civil Service Council, has started the training of civil servants. The training was first launched within the framework of the “Freedom of Information Training for Civil Servants Responsible for Public Affairs” Project, which was supported by the OSCE Office in Yerevan. During two-day training workshops 84 employees of information departments of governmental bodies and 10 regional administrations acquired necessary practical knowledge and skills for the implementation of the Law on Freedom of Information.

Another outcome of this cooperation was the revision of the job descriptions of civil servants responsible for public affairs in the Armenian civil service system. Their job descriptions have been revised to include their specific functions and duties in the FOI sphere.

The FOICA-Civil Service Council cooperation was continued in November 2010 when the training of civil servants restarted in the “Non-Formal Freedom of Information Educational Center”. Those were three-day training sessions devoted to the freedom of information. Following the training the participants received state-approved certificates. In November-December 2010 and March-June 2011, 301 civil servants took part in the trainings of the Educational Center.

The training sessions are held in accordance with the program on “Ensuring the Principles of Integrity Freedom of Information and Public Affairs in the Governance System”, approved on 28 October 2010, by the Decision N847 of the RA Civil Service Council. The Civil Service Council with its decision N302-<sup>2</sup>, dated 17 April, 2008, included the “Freedom of Information and Public Relations in the Governance System” training program into the permanent training curriculum of civil servant information officers.



Since October, 2011 Freedom of Information Educational Center has restarted its training courses, where community servants from the regions of Kotayk, Aragatsotn and Ararat are participating. The trainings are held with the training program “International Relations, Freedom of Information and Public Affairs in the Local Self-Government System”, established by the 20 October, 2011 N 129-U order of the ARM Vice Prime Minister, Minister of Territorial Administration Armen Gevorgyan. Each training lasts for 3 days. After finishing the training the participants are given state certificates accredited by the ARM Ministry of Territorial Administration, Freedom of Information Center of Armenia and the Union of Armenian State Servants.

It should be mentioned that Freedom of Information Educational Center was founded on 22 November, 2010 by Freedom of Information Center of Armenia in the framework of the “Access to Information for Community Involvement” project financed by USAID Armenia. In 2010-2011 the educational center trained 301 civil servants.

## FOI Training of Trainers



On November 25, by the initiative of the Freedom of Information Center of Armenia, a two-day FOI teacher training was launched.

The participants of the training were Armenian NGO and mass media representatives who have sufficient experience and knowledge in the FOI sphere and who will later take the role of FOI teachers.

In her speech President of Freedom of Information Center of Armenia Shushan Doydoyan underlined the importance of such trainings, emphasizing that today there already is a large demand for FOI teachers, who, by their own initiative or during the FOICA's future trainings, will represent the FOI sphere, will inform officials and representatives of civil society about the sphere's main principles, legislative regulations and implementation, and will share their experience with others.

This two-day training was divided into two main parts. In the first part FOICA expert Liana Doydoyan talked about the principles of the role and skills of a trainer in the training process, about speaking skills and presentational art. The second part was covered by FOICA lawyer Gevorg Hayrapetyan, who discussed with the participants the issues present in the FOI sphere, its legal regulations and necessary reforms.

## Two Web Projects of the FOICA Received High Appraisal

The official web site of the RA Ministry of Territorial Administration-[www.mta.gov.am](http://www.mta.gov.am) developed by the FOICA and funded by USAID/Armenia in 2011 was recognized as the best official web site in Armenia. On December 9, 2011 the Committee to Protect Journalists ([www.khosq.am](http://www.khosq.am)) announced outcomes of their monitoring during the press conference. For more details please visit here: [http://www.mta.gov.am/hy/news/item/2011/12/09/news\\_1112/](http://www.mta.gov.am/hy/news/item/2011/12/09/news_1112/)

Another web project of the FOICA [Givemeinfo.am](http://www.givemeinfo.am) co-funded by the USAID/Armenia and OSCE Yerevan office was among the best 4 web sites in the "Innovation of the Year" nomination category announced by the annual contest ArmNet Awards

2011 ([www.armnetawards.am](http://www.armnetawards.am)). This contest is organized already for the second time in Armenia and is designed to evaluate the achievements of the Armenian Internet sector and contribute to its further content development, as well as to contribute to the promotion of new websites. The contest is organized by SPMS, Orange Armenia and Internet Society of Armenia NGO.

## Human Rights Expo-2011

“It is important that our stand was the first one in the hall, because all the other human rights are built on this right. If you do not have complete information on time, then you cannot fully use your other rights”, stated President of “Freedom of Information Center of Armenia” NGO Shushan Doydoyan.

Since the independence of Armenia the acutest and most systematic problem of human rights’ protection is the lack of fair trial”, announced Human Rights Defender Karen Andreasyan during “Human Rights’ EXPO”. He urged all political powers not only to present today’s well known situation of the Judicial Power in the public

discussions around the forthcoming elections, but also to offer the voters working and realistic programs for having a fair judiciary. Briefing the year, he informed that complains sent to the Human Rights Defender’s office are mostly about denying family stipends and wrongly calculating the social pensions. With complains sent to the Human Rights Defender’s office most positive results were achieved from the Ministry of Defence. As for the legislative suggestions made by the Human Rights Defender’s office, the most were accepted by the ministries of Labor and Social Affairs, and Healthcare.

The 10 stands presented during the “Human Rights’ EXPO” were about different spheres of human rights.

“Freedom of Information Center of Armenia” presented the “Access to Information Right” stand. “It is important that our stand was the first one in the hall, because all the other human rights are built on this right. If you do not have complete information on time, then you cannot fully use your other rights”, stated President of “Freedom of Information Center of Armenia” NGO Shushan Doydoyan.

The 11 national minorities living in Armenia were represented with one stand.

“I have always said and am saying again that the rights of national minorities are protected on legislative levels but in order to realize those rights it is not

only necessary to define them by law, but also create means for the realization of those rights – equal opportunities and conditions”, stated Chairman of the board of “Midia-Shangal” Yezidi National Union” NGO Amo Sharoyan, adding that if rights stay on papers then they are not protected.

In the sphere of preventing abuses, important achievements are the observatory groups in the places for keeping arrested people. To some extent these groups have preventive nature - thinks President of “Civil Society Institute” NGO Aram Danielyan. He believes that the state does not wish to fight against abuses, and even obvious abuses are not responded properly. The human rights’ protector hopes that the national mechanism of abuse prevention will somehow solve the present issues.

Number one human rights’ protector, NA deputy Larisa Alaverdyan considers “Human Rights’ EXPO” positive in that NGOs have an opportunity to show what they are doing and with what issues people can turn to them when their rights have been violated. Besides the positive, Alaverdyan also sees some dangers. “We should be careful not to turn this into a ceremony like March 8. In reality that day has been and still is the women’s rights’ protection day, but we have turned it into a day for presenting perfumes. The same danger is present here, too. I have always said that December 10 is not a holiday. It is a day when we focus our attention on unsolved issues”, stated the number one human rights’ protector.

By` [hra.am](http://hra.am)

## Freedom of Information in the Republic of Armenia: Monitoring 2011

On 14 December, 2011 in “Hayeli” (“Mirror”) club Freedom of Information Center of Armenia presented the public with “Freedom of Information in the Republic of Armenia 2011” monitoring and the book summarizing its results.

**D**uring the even head of the Department of Democratization in the OSCE Yerevan Office Oliver McCoy made an opening speech. He emphasized the importance of information accessibility for effective governance and for keeping the authorities accountable.

Head of “Freedom of Information Implementation in the Republic of Armenia” project, FOICA expert Liana Doydoyan added that the “Law on Freedom of Information” has been in force for already 8 years. In the recent years quite many changes and positive results happened in the practice of implementing the FOI legislation. Hence, now there is a need to find out how information holders comply with the requirements of the Law.

FOICA lawyer Gevorg Hayrapetyan stated that the monitoring allowed the FOICA to define the present state of freedom of information in Armenia, and bring up the present issues.

